ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԽԱՉՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Հ. Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Մետաքսի մայրուղին հնուց ի վեր անփոխարինելի դեր է կատարել Արևելքի և Արևմուտքի միջև առևտրատնտեսական և մշակութային կապերի հաստատման, ժամանակի իմաստով նորույթների, առավել ևս նորաստեղծ գաղափարների փոխադարձ տարածման ու զարգացման գործում։ Գործնական շփումներ են ունեցել տարբեր ցամաքամասերում ապրող վաճառականները, արհեստավորները, գրագետ ու բանիմաց մարդիկ։ Մարդկանց միմյանց հետ շփումներ ունենալու պրոցեսին հատկապես մասնակցություն են բերել Մետաքսի ճանապարհի ուղիների ու ճյուղավորումների մերձավորությամբ ապրող հին ու նոր ժողովուրդները, այդ թվում չինացիները, ույգուրները, մոնղոլները, Միջին Ասիայի, Սիբիրի, Ղազախստանի, Ռուսաստանի Եվրոպական մասի հարավի, Իրանի, Արաբական թերակղզու, Կովկասի, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի տարածքում ապրող բազմաթիվ այլ ժողովուրդներ։

Եվրոպան Ասիայի հետ կամրջող այդ պրոցեսին իրենց ակտիվ ու գործնական մասնակցությունն են ունեցել նաև Անդրկովկասի ժողովուրդները, մասնավորապես հայերը, որոնց առևտրատնտեսական գործունեության լայն շառավիղը մեծապես պայմանավորված էր պատմական Հայաստանի աշխարհագրական դիրքով։ Հայկական լեռնաշխարհը մի կամուրջ էր Արևմտյան Ասիայի ու Եվրոպա աշխարհամասի միջև։ Հայկական լեռնաշխարհում էին խաչաձևվում միջազգային առևտրական այն ուղիները, որոնք Հայաստանը կապում էին Սև և Միջերկրական ծովերի ավազանների նավահանգիստների հետ, դրանց վրայով առևտրական գործարքներ կատարում Իրանում, Միջագետքում, Եգիպտոսում, Հնդկաստանում և Չինաստանում։

Հայաստանի կապերը Չինաստանի և նրա հարակից երկրների ու ժողովուրդների հետ սկզբնավորվել է դեռևս Մետաքսի ճանապարհով միջազգային տարանցիկ հարաբերությունների ստեղծման ժամանակներից, այսինքն մ. թ. ա. II դարի վերջերից։ Պլուտարքոսը վկայում է, որ Հայաստանի անդրանիկ մայրաքաղաքը՝ Արտաշատը, ունեցել է առևտրատնտեսական կապերի լայն շառավիղ և կարևոր նշանակություն մ. թ. ա. I դարում[1]*։ Հռոմապարթևական միջնորդ առևտրական հարաբերություններում Հայաստանի կատարած վճռորոշ դերի մասին են վկայում Ստրաբոնը և հին դարերի ուրիշ պատմիչներ*[2]*։*

*Անտիկ դարաշրջանում ստեղծագործած հեղինակների տվյալները լրացվում են Հռոմեական ուղեցույցի՝ Պևտինգերյան քարտեզի (*Tabula Peutingeriana*) պարունակած փաստերով։ Նրանում մասնավորապես նկարագրվում է այն ճանապարհը, որը սկզբնավորվում էր Չինաստանում ու Միջին Ասիայում, ապա Միդիայի (Իրան) վրայով անցնում դեպի Արտաշատ (*Artaxata*)։ Ճանապարհը ճյուղավորվում էր Էկբատանում (Համադան), գնում էր հյուսիս-արևմտյան ուղղությամբ դեպի Խոյ (*Gobdi*, վերծանված Հ. Մարկվարտի կողմից որպես* Chob *կամ* Choj*), այնտեղից Արտազի (կենտրոն՝ Մա-*

---

[1] Я. А. Манадян. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Ереван, 1954, с. 53.

[2] Страбон. География. М., 1964, XI, 5, 8; XII, 3, 36.

կու) վրայով հասնում էր Արտաշատ։ Հետո նա շարունակվում էր դեպի Սև ծովի մերձափնյա քաղաքները[3]։

Արտաշատը ծառայում էր որպես միջազգային առևտրի փոխաբեռնման կետ։ IV դարից Հռոմեական կայսրության ու Պարթևաստանի միջև, ինչպես վկայում է Պրոկոպեսը, գոյություն ուներ համաձայնություն, որով ապրանքների միջազգային փոխանակումը կատարվում էր երեք հատուկ նշանակված տեղերում՝ Մծբին, Կալինիկում (Ռակկա՝ Եփրատի վրա) և Արտաշատ քաղաքներում[4]։

V դարում Արտաշատին փոխարինելու եկավ Հայաստանի նոր մայրաքաղաքը՝ Դվինը (428 թ.)։ Նրա վրայով էր արդեն անցնում առևտրական մայրուղին, որը Չինաստանը, Միջին Ասիան և Իրանը կապում էր Բյուզանդիայի, հատկապես նրա նոր մայրաքաղաք Կոստանդնուպոլսի հետ։ Դա Մետաքսի ճանապարհի հիմնական ուղիներից մեկն էր, այսպես ասած միջին ուղին, որը սկզբնավորվելով Չինաստանի ներքին շրջաններում, Լոուլանով, Կարաշարով և Կաշգարով անցնում էր Ֆերգանայի դաշտավայր, հետո Մերվով, Սասանյան Իրանով և Հայաստանով դեպի Կոստանդնուպոլիս[5]։

Իրանով անցնող ուղին Ռեյ (Թեհրանի մոտ) քաղաքի մերձակայքում բաժանվում էր երկու հիմնական ճանապարհների։ Դրանցից մեկը գնում էր հյուսիսային մարզերով, գլխավորապես Մազանդարանի, Գիլյանի վրայով, մյուսը՝ այն տեղերով, որտեղ հետագայում հիմնադրվեցին Ղազվին, Զենջան, Միանե և Թավրիզ քաղաքները, հետո Մարանդի (Բակուրակետ, Ֆիլադելֆիա) վրայով դեպի Խոյ։ Չնայած այն բանին, որ երկրորդ ճանապարհն ավելի երկար էր, սակայն համարվում էր հեշտ անցանելի, քանի որ շրջանցում էր երկրի հյուսիսում եղած լեռներն ու ճահիճները[6]։

Դվինը, ինչպես հաստատում է Ն. Ադոնցը՝ վկայակոչելով Պրոկոպիոսին, այդ ժամանակահատվածում «Ասիայի միջազգային կյանքի կարևոր զարկերակն էր. այն պարսկական և հռոմեական ապրանքների փոխաբեռնման համար իբրև շուկա էր ծառայում»[7]։

Դվինում, ինչպես և Արտաշատում, փոխանակման ամենակարևոր ապրանքներն էին չինական մետաքսը և մետաքսյա գործվածքները։ Հ. Մանանդյանը բերում է հետևյալ անուղղակի տեղեկությունը, որը վերցված է միջնադարյան պատմաբան Գրիգոր Տուրացու «Historia Francorum» աշխատությունից։ Այնտեղ նշվում է, որ պարսկական տիրապետության դեմ 572 թ. հայերի բարձրացրած ապստամբությունից հետո, Վարդան Մամիկոնյանն և նրա զինակիցները, փախչելով Բյուզանդիա, կայսեր ներկայացան մեծ քանակությամբ մետաքսով, որը տարված էր Դվինից[8]։

Էկբատանից Դվին տանող ճանապարհը անցնում էր Գանձակ—Շահաստան, Մարաղա, Թավրիզ, Խոյ, Մակու ուղղությամբ։ Դվին տանող ճանապարհի այս ուղղության տարբերակը առաջադրված էր իր ժամանակին Կ. Միլլերի կողմից։ Նա տեղադրում է այդ կայանակետերը Tris peda (Ra Tarspedo)-ից դեպի Filadelfia (Մարանդ), Gobdı (Խոյ), Anteba (Արտազ) տա-

---

3 Հ. Մանանդյան. Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պտոլեմեյի քարտեզի. Երևան, 1936, էջ 10, 36։ Я. А. Манандян. Указ. соч., с. 53, 59, 60, 62։

4 Прокопий Кесарийский. История войн римлян с персами, вандалами и готами. Перевод С. Дастуниса. Кн. II, СПб., 1880, с. 181—182.

5 Е. Н. Лубо-Лесниченко. Великий Шелковый путь.—Вопросы истории. 1985, № 9, с. 93—94.

6 Լեո. Երկեր. հ. I, Երևան, 1966, էջ 142; В. Бартольд. Сочинения. Т. VII, 1971, с. 199—202, 204—205.

7 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 222.

8 Я. А. Манандян. Указ. соч., с. 110.

նող ճանապարհի հատվածի վրայով[9]։ VII դարի սկզբին Արտազի վրայով անցնող ճանապարհի գոյության փաստը հաստատում է Սեբեոսը, որը նշում է, թե պարսկական թագավոր Խոսրով Անուշիրվանը «հանդերձ բազմութեամբ սպառազէն զաւրացն և փղաւք բազմաւք» անցավ Փոքր Ասիա «ընդ գաւառն Արտազու»[10]։

Paresaca (Հ. Մանանդյանի մեկնաբանությամբ՝ Պարսք) կայանակետը, որը նշվում է Պևտինգերյան քարտեզում Tris peda-ից հետո դեպի էկբատան, պիտի լինի Գանձակ—Շահաստանի շրջանի մոտակայքում։ Ն. Ադոնցը՝ հիմք ունենալով Փավստոս Բուզանդի տեղեկությունները, եզրակացնում է, թե հենց այնտեղ էլ «կանգնած էր հայ թագավորի սահմանային պահակազորքը»[11]։

Ինչպես երևում է Անանիա Շիրակացու «Մղոնաչափք-ից», VI—VII դդ. սկզբին գոյություն ուներ նաև մյուս ճանապարհը, որը ձգվում էր դեպի Դվին։ Սկիզբ առնելով Պարսից ծոցում, նա տանում էր Դվին Բասրայի, Տիզբոնի, Գանձակ—Շահաստանի և Նախիջևանի վրայով[12]։ Գանձակ—Շահաստանից դեպի Նախիջևան անցնող ճանապարհի հատվածը ձգվում էր Խոյի և Արաքս գետի Ջուղայի մոտ եղած գետանցի վրայով։

Խաչաձևվելով Դվինում, այդ ուղիները կազմում էին մի հիմնական ճանապարհ, որը տանում էր դեպի Կոստանդնուպոլիս։ Այն անցնում էր Կարինով (Էրզրում), Կողոնիայով (Կոյլի Գիսար), Նիկիայով (Իզնիկ), Ամասիայով, Գանդրայով (Գերմանիկապոլսի բերդը) և Անդրիայով (Անկյուրա/Անկարա)[13]։

Հյուսիսային ճյուղը, անջատվելով հիմնական մայրուղուց, Դվինից անցնում էր դեպի Սև ծովի նավահանգիստները՝ Ֆասիս (Փոթի) և Դիոսկուրիա (Սեբաստապոլիս, Սուխումի) Կոխքիսի (Կոլխիդա) և Արմազիի (Մցխեթ) վրայով[14]։ Ավանդական ճանապարհը Սև ծովի նավահանգիստներից մտնում էր Հայաստան՝ Արարատյան դաշտավայրը Sinora կայանակետի վրայով՝ այսօրվա Դիրիջանի մոտակայքում[15]։

V դարից հայերը սկսեցին Չինաստանի, Միջին Ասիայի և Իրանի մասին եղած տեղեկությունները քաղել նաև հայկական մատենագրության առաջին երկերից՝ Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ից, Փավստոս Բուզանդի, Սեբեոսի աշխատություններից, Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացույց»-ից և այլն։

Պետք է նշել, որ թեև «Աշխարհացույցը» հենվում է Պտղոմեոսի երկի վրա, այդուհանդերձ, բովանդակում է նաև նոր տեղեկություններ, որոնք համապատասխանում են VI—VII դդ. սկզբի, այսինքն նրա գրելու ժամանակի իրադրությանը։

«Աշխարհացույցում» պատմելով Չինաստանի մասին, Անանիա Շիրակացին մասնավորապես նշում է, որ այնտեղ «լինում է շատ աբրեշում, որ ամենաընտիրն է ողջ աշխարհում, այդ պատճառով էլ երկրի բնակիչները կերպասագործ ընչավետ արհեստավորներ են»[16]։ Գիտական հետաքրքրու-

---

9 Նույն տեղում, էջ 159—160։ Հ. Հ. Մարտիրոսյան. Այաս—Թովրիզ առևտրական մայրուղու Բագավան—Խոյ հատվածը (XIII—XIV դդ.).—«Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 2, էջ 130—137։

10 Պատմութիւն Սեբեոսի. Երևան, 1979, էջ 68։

11 Н. Адонц. Указ. соч., с. 226. Բ. Հ. Հարությունյան. Հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքների հարցի շուրջը.— «Պատմա-բանասիրական հանդես», 1988, № 4, էջ 45—47։

12 Անանիա Շիրակացի. Մատենագրություն. Երևան, 1979, էջ 313։

13 Նույն տեղում, էջ 312—313։

14 С. Т. Еремян. Торговые пути Закавказья в эпоху Сасанидов. По Tabula Peutengeriana.—Вестник древней истории. 1939, № 1, с. 79—97; Я. А. Манандян. Указ. соч., с. 153—159.

15 С. Т. Еремян. Указ. соч., с. 84.

16 Անանիա Շիրակացի. Մատենագրություն, էջ 311։

թյուն են ներկայացնում նաև «Աշխարհացույցի» այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Չինաստանից արևմուտք ընկած վայրերին և այնտեղ ապրող ժողովուրդներին։ Այսպես, Սկյութիայի (Թուրքեստան) մասին ասված է, որ այն սահմանակից է Չինաստանին։ Սկյութիայի մարզերից նշվում են Սոդդիանան կամ Սագաստան և Սակեն, որտեղ բնակվում էին տասնհինգ հարուստ արհեստագործ և վաճառական ցեղախմբեր։ «Աշխարհացույցում» բերված են որոշ մանրամասներ Չինաստան տանող ճանապարհի մասին, այն է. «Լեռնաշղթայի արմունկից երեք հարյուր մղոն դեպի հյուսիս, լեռան վրա կա ճանապարհ և իջևան (ամենայն հավանականությամբ, այստեղ խոսքը գնում է Պտղոմեոսի Հերմետիոնի մասին—Հ. Մ.), որով գնում են Չինաստան, գալով Սագաստանից՝ Քարերուրգով, որը գտնվում է Զարմանալի դաշտավայրում»[17]։

«Աշխարհացույցի» հաղորդած փաստերը որոշ չափով տարբերվում են Պտղոմեոսի երկում եղած տեղեկություններից։ Ինչպես երևում է, նրանք կազմված էին Անանիա Շիրակացու ժամանակակիցների պատմածների հիման վրա, այն մարդկանց, որոնք եղել էին Չինաստանում, Միջին Ասիայում և այլուր։

Մետաքսի ճանապարհով Արևելքի և Արևմուտքի միջև առևտրին հայերի ունեցած մասնակցության մասին վկայում են նաև ուղղակի և անուղղակի տեղեկություններ, որոնք վերցրած են ասորական, եվրոպական, արաբական և այլ աղբյուրներից։

Ինչպես հայտնի է, արևմուտքից եկվորների, մասնավորապես քրիստոնյաների մասին չինական պատմական աղբյուրներում սկսեց հիշատակվել VI դարից հետո, այսինքն այն ժամանակներից, երբ Պարսկաստանից Չինաստան եկան առաջին ասորի-նեստորականները[18]։ «Արևմտացիները» Չինաստանում անվանվում էին «խու», այսինքն մորուքավորներ։ Այն ժամանակվա չինական ժամանակագրություններում «խու վաճառականները», նշում է չինական գիտնական Մա Յունը, նկարագրվում էին իբրև խորն ընկած աչքերով և մեծ քթերով մարդիկ, որոնք արտահայտվում էին իրանական տարբեր խոսվածքներով[19]։ Միջին դարերում, այդ թվում նաև Թան (618—907) հարստության ժամանակ, «խու» անվանումը տրվում էր առհասարակ Չինաստանից արևմուտք ընկած երկրներից եկած ամեն մի այցելուի[20]։

Հայերը եղել են քրիստոնյա-նեստորականների այն թվում, որոնք հաստատվել էին Չինաստանում VI դարից հետո։ «Գիրք թղթոցի» վկայությամբ, նեստորականությունը իր զարգացման անդրանիկ փուլում ունեցել է որոշ հաջողություն նաև Հայաստանում, առանձնապես նրա այն մարզերում, որոնք սահմանակից էին Ասորիքին[21]։ Հայաստանում նեստորական ուսմունքի հետագա տարածումը կասեցնելու նպատակով 555 թ. գումարվեց Դվինի եկեղեցական երկրորդ ժողովը[22]։ Ամենայն հավանականությամբ, հայ նեստորականների որոշ խումբ, հետապնդվելով հայ առաքելական եկեղեցու կողմից, միացավ դեպի արևելք տեղաշարժվող այն ասորիներին և այլ քրիստոնյա-նեստորականներին, որոնք հալածվում էին սասանյան իշխանությունների կողմից։ Նեստորականների Չինաստան թափանցելու նպատակն էր նաև ուժեղացնել առևտրական և մշակութային այն կապերը, որոնք վաղուց ի վեր գոյություն ունեին Չինաստանի և Մետաքսի ճանապարհի արևմտյան մասի վրա գտնվող այլ երկրների միջև։

---

17 Նույն տեղում, էջ 306—307։

18 Е. И. Кычанов. Сирийское несторианство в Китае и Центральной Азии.— Палестинский сборник. Вып. 36 (89), Л., 1978, с. 76.

19 Ма Юн. «Шелковый путь» с Востока на Запад.—«Курьер» ЮНЕСКО. Париж, июль, 1984, с. 23.

20 Э. Шефер. Золотые персики Самарканда. М., 1981, с. 18.

21 Գիրք թղթոց. Թիֆլիս, 1901, էջ 70, 76։

22 Н. Адонц. Указ. соч., с. 339—340.

Ա. Ալպոյաճյանը գիտական շրջանառության մեջ է դնում ֆրանսիացի ուսումնասիրող Պոնիեի հաղորդած տեղեկություններն այն մասին, որ VII—VIII դդ. Իսիկ-Կուլ լճի ավազանում՝ Չինաստանի սահմանի մոտ, հայ միսիոներների կողմից հիմնվել է Ս. Մատթեոս վանքը[23]։ Այս մասին վկայում է նաև կատալոնական քարտեզը, որը հիշատակում է Իսիկ-Կուլ լճի մոտ «Հայ եղբայրների» վանքը[24]։

Միջին Ասիայում հայկական բնակավայրերի տեղաբաշխման մասին եղած փաստերը լրացվում են Սեբեոսի հաղորդած տեղեկություններով։ Նրա կարծիքով VII դարի սկզբին հայկական համայնք կար Վրկանում («զաշխարհն Վրկանայ»), «առ ստորոտով անապատին մեծի, որ ի Թուրքաստանի և ի Դելհաստան»[25]։ Պատմիչը նշում է նաև, որ այս համայնքի անդամները գերի էին տարված Հայաստանից և «զլեզու իւրեանց մոռացեալ»։ Սա վկայում է այդ տեղերում նրանց վաղուց բնակվելու մասին, հնարավոր է՝ պարսկաբյուզանդական առաջին պատերազմների ժամանակներից

Ուշադրության արժանի է նաև Սեբեոսի այն տեղեկությունը, որ հայերի հետ միասին այնտեղ բնակություն էին հաստատել ոչ քիչ թվով եկվորներ Բյուզանդիայից («յիշխանութենէն Յունաց») և Ասորիքից («յԱսորուց կողմանէ»)[26]։ Սեբեոսի հաղորդած վերոհիշյալ և այլ տեղեկությունները հիմք են տալիս ենթադրելու ինչ-որ քրիստոնյա առևտրական ֆակտորիայի գոյությունը Մետաքսի ճանապարհի՝ Միջին Ասիայի և Իրանի միջև ընկած հատվածում VI—VII դդ.։

Չինաստանի հետ հայերի ունեցած վաղ կապերի օգտին է խոսում այն փաստը, որ Բյուզանդիայի մասին, Է. Շեֆերի վկայությամբ, միջնադարյան Չինաստանում գիտեին «Ռոմ» անունով։ Է. Շեֆերը պարզաբանում է, որ այս տերմինը եկել է Չինաստան «մի արևելյան լեզվից» «Հռոմ» ձևով[27]։ Հռոմ ձևով անունը օգտագործվում է միայն հայերենում։ Պետք է ենթադրել, որ Չինաստան այցելող հայերն իրենց հետ այնտեղ են բերել Հռոմի, այսինքն Բյուզանդիայի անվանման այս տարբերակը։

Տեղեկություններ կան նաև այն մասին, որ հայերը այդ ժամանակ ոչ միայն սոսկ այցելում էին Չինաստան, այլև ապրում էին այնտեղ։ Այդ են, մասնավորապես, վկայում վերջին ժամանակներս գիտական շրջանառության մեջ դրված տեղեկությունները հախճապակե գունազարդ արձանիկների մասին, որոնք պատկերում են Թան դինաստիայի ժամանակներից հայտնի տարբեր ազգությունների ներկայացուցիչների՝ ույգուրների, խորեզմցիների, Թոխարցիների, քաշմիրցիների, կաշգարցիների, Թուրքերի, պարսիկների, սեմիտների և այլն։ Արձանիկները վերարտադրում են այդ ազգությունների բնորոշ դիմագծերը։ Լ. Խաչիկյանի կարծիքով, դրանց մեջ կան նաև հայերի դիմանմանությամբ մի քանի արծվաքիթ տղամարդկանց արձանիկներ՝ տիկերը գոգերին։ Նա գտնում է, որ այս արձանիկները հիմք են ծառայում ենթադրելու, որ հայերը Չինաստանում ունեցել են իրենց համայնքները և այլ զբաղմունքների հետ միասին պարապել են նաև խաղողի մշակությամբ և գինեգործությամբ[28]։

---

23 Ա. Ալպոյաճյան. Պատմություն հայ գաղթականության. հ. Բ, Կահիրե 1955, էջ 324։

24 Н. Я. Марр. Надгробный камень из Семиречья с армяно-сирийской надписью 1323 г.—ЗВОАО. Т. VIII, с. 344—349; В. Бартольд. Сочинения. Т. IX, М., 1977. с. 278.

25 Պատմություն Սեբեոսի, էջ 96—97։

26 Նույն տեղում, էջ 97։

27 Э. Шефер. Указ. соч., с. 18.

28 Լ. Ս. Խաչիկյան, Հ. Դ. Փափազյան. Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը. Երևան, 1984, էջ 27—28. Jane G. Mahler. The Westerner among the Figurins of the T'ang Dinasty of China. Roma, Toronto, 1959, p. 94—95. plate III, a. b. c. d. e.

Դասակարգելով «արևմտականներին» ըստ ազգային պատկանելության, Ջ. Մալերը առանձնացնում է նրանցից նաև «միջերկրական-կովկասյան» մի խումբ՝ «անատոլիացիներ, կովկասցիներ՝ հայերը ներառյալ»[29]։ Այս կապակցությամբ խոսելով արմենոիդների մասին, գրքի հեղինակը, վկայակոչելով մասնագետներին, հանգում է այն եզրակացության, թե մարդկանց այս տիպի ներկայացուցիչները իրենց բնորոշ գծերը չեն փոխել հազարամյակի ընթացքում և նրանց «գանգերը համարյա համապատասխանում են այժմյան հայերի գանգերին»[30]։

Մետաքսի ճանապարհով առևտուրը, որը V—VI դդ. գտնվում էր Սոդդիանայի, Քուշանի և Պարթևաստանի ձեռքում, VII դարում, արաբական արշավանքների հետևանքով, անցավ արաբ վաճառականների հովանավորության տակ։

Իրանի և Միջին Ասիայի հետ VIII—XIII դդ. Հայաստանի ունեցած մշակութային կապերի մասին մենք տեղեկություններ ենք քաղում Իբն ալ-Ֆաքիի, Իսթախրիի, Իբն Հաուկալի, Յակուտի և ուրիշ աշխարհագիրների երկերից։ Անդրադառնալով բուն Հայաստանի և Հյուսիս-Արևմտյան Իրանի հայ բնակչության տնտեսական գործունեությանը, Իբն Հաուկալը, մասնավորապես, գրում է, որ այնտեղ «...կան ապրանքներ, արտահանման առարկաներ... ինչպես հայկական գոտիներ, որոնք ծախվում են մեկից տաս դինար ամեն մեկի համար, և ոչինչ նմանը չկա ուրիշ երկրներում... Մարանդում, Թավրիզում, Դաբիլում. (Դվին) ու Հայաստանի մարզերում պատրաստվում են հայկական նստարաններ (գորգե փռվածքներ և մետաքսյա բարձեր—Հ. Մ.) և գորգեր, որոնք հայտնի են հայկական «մահֆուրներ» անվան տակ»[31]։

Ադամ Մեցը այս կապակցությամբ նշում է, թե «...Մերվում և առանձնապես Թարարեստանում (Մազանդարան) ...մանում էին ամուր սբրեշում թելը, որը արտահանում էին ամեն կողմեր և որից, հարևանությամբ գտնվող Հայաստանում, պատրաստում էին հռչակավոր գոտիներ վարտիքների համար, որոնք արժեին 1—10 դինար»[32]։

X դարում միջազգային առևտրում կարևոր դեր էր խաղում Անի քաղաքը, որն ընկած էր Դվին—Տրապիզոն ճանապարհի վրա։ Դառնալով Հայաստանի մայրաքաղաք, Անին X—XI դդ. առևտրական սերտ կապեր էր պահպանում Միջին Ասիայի, Իրանի, Ռուսաստանի եվրոպական մասի հարավի և Բյուզանդիայի հետ։ Չինաստանից Անի էին բերվում մետաքս, ճենապակի և ուրիշ ապրանքներ։ Իր հերթին Անիից Արաբական խալիֆայության երկրներ և Բյուզանդիա արտահանվում էին տեղական արտադրության ապրանքներ, դրանց թվում նաև ոսկյա թելով կարած մետաքսե գործվածքներ։ 1908 թ. պեղումների ժամանակ, օրինակ, Անիում հայտնաբերվել էին ոսկով և մետաքսով կարված հարսի շորեր[33]։

Բագրատունյաց Հայաստանի առևտրի ծավալի և միաժամանակ Չինաստանի, Միջին Ասիայի և Իրանի հետ նրա ունեցած ամուր կապերի մասին կարելի է դատել Ասողիկի հայտնած տեղեկություններով։ Նա, մասնավորապես, հաղորդում է, որ Սմբատ I-ի (890—914) օրոք Հայաստանը այնպիսի վերելք էր ապրում, որ հովիվներն անգամ մետաքսե շապիկներ էին հագնում։

Մետաքսի ճանապարհով առևտուրը հարստության աղբյուրներից մեկը դարձավ նրա երկայնքով մեկ տեղաբաշխված քաղաքների, այդ թվում նաև հայկական քաղաքների՝ Արտաշատի, Դվինի, Անիի, Արծնի, Կարսի և մյուսների համար։

---

29 J. Mahler. Op. cit., p. XIII.

30 Նույն տեղում, էջ 11։

31 Н. А. Караулов. Сведения арабских писателей о Кавказе. Армении и Азербайджане.—СМОМПК. Вып. XXXVIII, Тифлис, 1911, с. 92—95.

32 А. Мец. Мусульманский ренессанс. М., 1966. с. 360.

33 И. Орбели. Развалины Ани. СПб., 1911, с. 47.

Խոսելով «խու վաճառականների» սասին, Մա Յունը ընդգծում է, որ նրանք ձյունապատ Պամիրի, Թարիմ ավազանի օազիսների վրայով, Հուանհեից դեպի արևմուտք միջանցքով և Կուն-Լուն լեռնաշղթայի վրայով Չանյան կամ Լոյան էին ուղեկցում ուղտերի քարավանները, բեռնված մեծ քանակությամբ ապրանքներով, ինչպես՝ համեմունքներ, թանկարժեք քարեր, ապակե իրեր։

Քարավանները հետ էին վերադառնում մետաքսի բեռով, ընդ որում գնալը և վերադառնալը տևում էր երկու տարի։ Վաճառականները ճանապարհին ենթարկվում էին լուրջ փորձություններին, անգամ կյանքն էին վտանգում, բայց չէին ընկրկում, քանի որ ստանում էին մեծ եկամուտներ։ Մետաքսը Չինաստանից արևմուտք, ավելի կոնկրետ՝ Հռոմ ապա Բյուզանդիա տեղափոխելը տալիս էր մի ամբողջ կարողություն։ Այդ հարստությունը Կենտրոնական և Արևմտյան Ասիայի շատ հռչակավոր քաղաքների ծաղկման ու շքեղության տնտեսական հիմքը դրեց[34]։

Մետաքսի ճանապարհով տնտեսական և մշակութային փոխհարաբերությունները իրենց գագաթնակետին հասան VII—VIII դդ։ Այդ ճանապարհով առևտուրն սկսեց անկում ապրել IX—X դդ., որը պայմանավորված էր ծովային կապերի զարգացմամբ ի վնաս ցամաքայինի, ինչպես նաև քաղաքական գործոններով[35]։ Բայց առևտուրը Մետաքսի ճանապարհով, չնայած ոչ այնքան ինտենսիվ, ինչպես առաջներում, այնուամենայնիվ եղել է բավական աշխույժ և կատարվում էր մինչև XVI դարը[36], իսկ առանձին ժամանակահատվածներում ապրել է նկատելի վերելք։

Այդպիսի վերելք սկսվեց մասնավորապես XIII—XIV դդ., երբ Արևելքի և Արևմուտքի միջև առևտրական կապերի զարգացմանը նոր թափ հաղորդեցին մոնղոլները։ XIII դարի 50—60-ական թթ. Իրանի, Անդրկովկասի և Փոքր Ասիայի տարածքում Հուլավյան պետության ստեղծման հետևանքով նրանց կայսրությունը տարածվեց մինչև Միջերկրականը և անուղղակի շփման մեջ մտավ Արևմտյան Եվրոպայի երկրների հետ։ Չինաստանից մինչև Միջերկրական և Սև ծովերի ափերի ամբողջ երկայնությամբ վերացան քաղաքական սահմաններն ու մաքսային խոչընդոտները, ինչը հանգեցրեց Արևելքից Արևմուտք տանող առևտրական ճանապարհների միացմանը։

Մոնղոլների օրոք ասիական-եվրոպական առևտուրը հիմնականում կատարվում էր փոքր պետությունների միջոցով, որոնք հարում էին Սև և Միջերկրական ծովերի ափերին՝ հունական Տրապիզոնի թագավորությունը և Կիլիկյան Հայաստանը։ Գլխավոր նավահանգիստները, որոնցից սկսվում էին ցամաքի առևտրական ուղիները դեպի Ասիա, Տրապիզոնն ու Այասն (Կիլիկյան Հայաստան) էին։ Ինչպես նկատում է Ա. Լիբիերը, Այասից և Տրապիզոնից սկսվող ճանապարհը «օգտագործվում էր անգամ մինչև Չինաստան ամբողջ հարյուր տարվա ընթացքում, 1240 և 1340 թթ. միջև, երբ մոնղոլները ուժեղ էին։ Այն ժամանակ օտար վաճառականները և ճանապարհորդները մոնղոլների տարածությունները անցնելու համար օգտվում էին նրանց հովանավորությունից և աջակցությունից... Տրապիզոն հասնող ճանապարհները սնում էին Տրապիզոնի և Փոքր Հայաստանի (Կիլիկյան Հայաստան—Հ. Մ.) փոքրիկ քրիստոնյա պետությունները, որոնք ծառայում էին որպես մոնղոլական հողերի նախագոները»[37]։

Հատկանշական է, որ Մարկո Պոլոն իր ուղին դեպի Չինաստան սկսեց Այասից, իսկ Օդորիկո Պորդենոնացին՝ Տրապիզոնից։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը անցան Հուլավյան պետության մայրաքաղաք Թավրիզով, որն այն ժա-

---

[34] Ма Юн. Указ. соч., с. 23.

[35] Е. И. Лубо-Лесниченко. Указ. соч., с. 97.

[36] Ма Юн. Указ. соч., с. 24.

[37] A. H. Lybyer. The Ottoman Turks and the Routes of Oriental Trade.— The English Historical Review. London, 1915, CXX, p. 57-1.

մանաև փոխաբեռնման կետ էր Չինաստանից, Միջին Ասիայից, Հնդկաստանից, ինչպես նաև Եվրոպայից՝ Վենետիկից և Ջենովայից բերվող ապրանքների համար։

XIV դարի 20—30-ական թթ. առևտրական ճանապարհներից մեկը՝ Այաս—Թավրիզ ճանապարհը, նկարագրվել է ֆլորենցիացի ճանապարհորդ Ֆրանչեսկո Բալդուչի Պեգոլոտիի կողմից՝ իր «Առևտրի պրակտիկա» երկում[38]։ Այս քարտեզ-նկարագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Այաս-Թավրիզ ճանապարհը անցնում էր այն ժամանակվա արհեստավորության և առևտրի կարևոր կենտրոնների՝ Կեսարիայի, Սեբաստիայի, Երզնկայի, Էրզրումի, Բաղավանի, Մակվի, Խոյի, այլ քաղաքների և բնակավայրերի վրայով, որտեղ ապրում էին նաև հայկական խոշոր համայնքները՝ հայտնի միջազգային տարանցիկ առևտրի մեջ իրենց ակտիվ մասնակցությամբ[39]։

Այս առևտուրը ավելի շատ ընդարձակվեց, երբ իշխանական աթոռը տեղափոխվեց Սուլթանիե, որն ընկած էր Ջենջանի և Ղազվինի միջև։ Այնտեղ գալիս էին վաճառականներ Պարսից ծոցի ավազանի շրջաններից, Եվրոպայից, Տրապիզոնից, Կաֆայից (Ղրիմ) և այլ վայրերից։ Պարսից ծոցի Օրմուզ նավահանգստի վրայով Չինաստանից մետաքսի հետ միասին Սուլթանիե էին բերում սուտակներ, մարգարիտներ և այլ ապրանքներ[40]։

1313 թ. Օլջեյտու սուլթանը Թավրիզից և Իրանի այլ քաղաքներից Սուլթանիե տեղափոխեց հազարավոր բնակիչներ։ Նրանց թվում կային շատ հայ ընտանիքներ՝ հիմնականում արհեստավորներ ու առևտրականներ։

Սուլթանիեի հայ կաթոլիկ համայնքի վանահորը՝ արքեպիսկոպոս Անտոն Սուլթանիեցուն վիճակվել էր դառնալ Չինաստանի ուսումնասիրության ռահվիրաներից մեկը։ 1316—1334 թթ. ժամանակաշրջանում Անտոն Սուլթանիեցին Հովհան XXII պապի հրամանով ստեղծել է մի երկ Չինաստանի մասին, որը վերնագրված է՝ «Տեղեկություններ Չինաստանի մեծ Խանի պետության մասին»։ Ինչպես հաղորդում է իտալացի աստվածաբան և հայագետ Կղեմես Գալանոսը, այդ գործը դեռևս 1351 թ. թարգմանվել է ֆրանսերեն, իսկ 1529 թ. տպագրվել է «Պատմություն թաթարական Չինաստանի մեծի խանի» վերնագրի տակ[41]։

Անտոն Սուլթանիեցին հայտնի էր նաև Անտոն-Հայ անունով։ Այդ անվան տակ է հիշում նրան Նիկոլայ Միլեսկու-Սպաֆարին, որը գլխավորում էր 1675—1678 թթ. ռուսական դեսպանությունը դեպի Չինաստան։ Նա մասնավորապես գրում է. «...և հաստատ է իսկապես, որ մետաքսի արդյունահանումը ուրիշ պետություններ ևս սովորեցին չինացիներից, և ոչ միայն այդ, այլև թնդանոթներ ձուլելը, և ծովի վրայով լաստերով նավարկելը, նույնպես և գրքեր տպելը Եվրոպայում չինացիներից սովորեցին։ Քանի որ երբ կալմիկները (խոսքը մոնղոլների մասին է—Հ. Մ.) ու թաթարները գրավեցին Չինաստանը, նրանց հետ Չինաստան եկան հայր Օդորիկոն (Օդորիկո Պորդենոնացի—Հ. Մ.) և Անտոն-Հայրը և վենետիկցի Մարկո Պոլոն և իրապես Չինաստանից Եվրոպա այդ արհեստներն ու արվեստները նրանք բերեցին»[42]։

Անտոն Սուլթանիեցին՝ ականավոր մտավորական, կրոնական ու քաղաքական այդ գործիչը, իր մեջ համատեղում էր հայ վաճառականի և միսիո-

---

38 F. Pegolotti. La pratica della mercatura. Ed. by Evance. Mass., 1936; H. Yule. Cathay and the way thither. Vol. II, London, 1866.

39 Հ. Հ. Մարտիրոսյան. Նշվ. աշխ., էջ 130—137։

40 Рюи Гонзалес де Клавихо. Дневник путешествия ко двору Тимура в Самарканд в 1409—1406 гг.—Сборник отделения русского языка и словесности. Т. XXVIII, № 1, СПб., 1881, с. 178—179.

41 Կղեմես Գալանոս. Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ Մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ. հ. Ա, Հռոմ, 1656, էջ 527—528։

42 Николай Милеску-Спафарий. Сибирь и Китай. Кишинев. 1960, с. 184.

ների գործունեությունը՝ Արևելքի և Արևմուտքի միջև տնտեսական և մշակութային կապերի ստեղծման ոլորտում։

Քաղաքական անկայունությունը, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Ասիայի տնտեսական ու մշակութային զարգացման աստիճանական անկումը, որը սկսվեց XV դարի սկզբներին, հատկապես Լենկ Թեմուրի մահվանից հետո, հանգեցրեց Արևելքի և Արևմուտքի միջև եղած առևտրական հարաբերություններում տեղի ժողովուրդների միջնորդական նախկին դերի կորստին։ Ինչպես նշում է Մա Յունը, Մին դինաստիայի կայսր Յունլեն 1424 թ. հրամայեց փակել Չինաստանի հյուսիս-արևմտյան սահմանները։ Ճիշտ է, երկիրը դրանից հետո որոշ ժամանակ շարունակում էր տնտեսական ու մշակութային կապերը պահպանել Պամիրից դեպի արևմուտք գտնվող Կենտրոնական Ասիայի մի շարք պետությունների հետ, սակայն այդ կապերը թերևս կրում էին ռեգիոնալ և ոչ թե գլոբալ բնույթ[43]։

XVI դարում հայ վաճառականները դեռևս շարունակում էին կատարել իրենց առևտրական ճանապարհորդությունները դեպի Միջին Ասիա և Չինաստան։ Այն ժամանակվա հայ հեղինակ Գրիգորիս Աղթամարցին իր բանաստեղծության մեջ գրում է, որ Մխիթար անունով մի հայ վաճառական Բաղեշից անցավ Ատրպատական—Ղում—Համադան երթուղով և Բուխարայի ու Սամարղանդի վրայով հասավ Հթայ Չինաստանի սահմանի մոտ[44]։ Հրապարակած փաստերից երևում է, որ Մխիթարը գնացել է Մետաքսի ճանապարհի այն հատվածով, որը Կաշգարի, Յարկենդի վրայով տանում էր դեպի Հոտան (Գրիգորիս Աղթամարցու մոտ՝ «Հթայ»)՝ Սինձյան-Ույգուրյան ավտոնոմ շրջանի գլխավոր առևտրական քաղաքներից մեկը։

Առևտուրը Մետաքսի ճանապարհի արևմտյան հատվածի վրայով հայ վաճառականները կատարում էին XVII դարում։ Այդ մասին վկայում է 1643 թ. գրված մի հիշատակարան։ Հիշատակարանի հեղինակ վաճառական Հակոբը գրում է. «...մինչև Լ. (30) ամի վերայ աշխարհիս շրջէի բազում ընչիք, ծախիք վաճառէի զինչս իմ, եթէ ծովով կամ ցամաքով։ Զամենայն երկիրս տեսանէի՝ ի յերկիրն Ֆռանկաց տեսայ, բաղում անգամ ի Կոստանդնուպոլիս վաճառեցի զինչս իմ, ի յերկիրն Յունաց բովանդակ տեսի մինչ ի Հալապ, Բաղդատ, Շամ (Դամասկոս—Հ. Մ.), Երուսաղեմ, տեսայ։ Այլ և Պարսից երկիրն զամեն՝ մինչ ի Խորասան տեսայ։ Բ (2) անգամ Օզբէգստան մտայ։ Այլև գ (3) անգամ ի յերկիրն Հնդկաստան գնացի»[45]։

XVII—XVIII դդ. Մերձավոր և Միջին Արևելքի առևտրատնտեսական կապերը զգալի չափով ընդարձակվեցին, ավանդական ճանապարհներին ավելացան նոր ճանապարհներ, որոնք ձգվում էին դեպի Պարսից ծոց և այնտեղից՝ Հնդկաստան և Չինաստան, ինչպես նաև Աֆրիկայի հարավային վերջամասով դեպի Եվրոպա և դեպի հյուսիս՝ կասպիական-վոլգյան տրանզիտով մինչև Եվրոպա։ Հայ վաճառականները շարունակում էին օգտագործել բոլոր այս ճանապարհները։ Կարծես ընդգծելով նրանց կարևոր դերը միջազգային առևտրում, անգլիական հեղինակ Ջ. Հանվեյը գրում է՝ «...առևտուրը Պարսկաստանի և Թուրքիայի միջև իր խոշոր մասով կատարվում է հայերի միջոցով.... Նրանց ծառայություններից օգտվում են գլխավորապես անգլիական, ֆրանսիական և հոլանդական վաճառականները, որոնք հաստատվել են Կոստանդնուպոլսում, Իզմիրում և Հալեպում։ Նրանք երկար ժամանակ ամենախորաթափանց վաճառականների համբավ են վայելում ողջ Ասիայում և շուկա բերելով Արևելքի արտադրանքը, հետ են տանում Եվրոպայի ապրանքները»[46]։

---

43 Ма Юн. Указ. соч., с. 24.

44 Մ. Ավդալբեգյան. Գրիգորիս Աղթամարցի. Երևան, 1963, էջ 721—728։

45 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641—1660). Երևան, 1984, էջ 436։

46 J. Hanway. An Historical Account of the British Trade over the Caspean Sea. Vol. I, London, 1753, p. 29.

Ամփոփելով վերոհիշյալ փաստերը, կուզենայինք միանալ Մա Յունի այն եզրակացությանը, թե գիտատեխնիկական հեղաշրջման մեր դարաշրջանում, այն ռեգիոնները, որոնցով մի ժամանակ անցնում էր Մետաքսի ճանապարհը, առավել կարևոր նշանակություն են ստանում։ Բացառված չէ, որ տրանզարյա մոտացությունից հետո, Արևելքն Արևմուտքին կապող այդ ճանապարհը նորից կվերստանա իր երբեմնի նշանակությունը ոչ միայն առևտրատնտեսական, այլ նաև ժողովուրդների մերձեցման տեսակետից[47]։

АРМЕНИЯ НА ПЕРЕКРЕСТКАХ ШЕЛКОВОГО ПУТИ

А. У. МАРТИРОСЯН

Резюме

Участие Армении в экономических и культурных связях по Шелковому пути подтверждается сведениями древних авторов I в. до н. э. Они дополняются данными римского итинерария—Пейтингеровой карты (IV в.), которая дает описание пути из Китая и Средней Азии через Экбатану (Хамадан, Иран) в тогдашнюю столицу исторической Армении—Арташат. В V в. через Двин проходил т. н. средний путь—из Китая в Ферганскую долину и оттуда через Мерв по Сасанидскому Ирану и Армении в Константинополь. Отрезок этого пути от Двина до Константинополя описан Ананией Ширакаци в «Мгоначапке» («Расстояния в милях»). Сведения о Китае и сопредельных ему на западе землях приводятся в другом его труде—«Ашхарацуйце» («Географии»). Об участии армян в торговле по Шелковому пути свидетельствуют также сирийские, арабские, европейские и другие источники. По ним, армяне посещали Китай в средние века, в том числе и в правление династии Тан (618—907). В тот период армянские поселения существовали вдоль западной части Шелкового пути на территории Средней Азии, в бассейне оз. Иссык-Куль, в Горгане и др. В XIII—XIV вв. азиатско-европейская торговля велась через греческое Трапезундское царство и Киликийскую Армению—их порты Трапезунд и Айас. Перевалочными пунктами на торговых путях были Тавриз и Султание. Настоятель армянской католической общины в Султание архиепископ Антон Султаниеци посетил Китай в период между 1316 и 1334 гг. и создал о нем сочинение. По утверждению исследователей, оно стоит в одном ряду с сочинениями Марко Поло и Одорико Порденоне.

---

[47] Ма Юн. Указ. соч., с. 24.